

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼԻԱՆ. Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 880 էջ:*

VERJINĬ SVAZLIAN. The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors. Yerevan: "Gitoutyoun" Publishing House of NAS RA, 2011, 850 p.

VERJİNE SVAZLIAN. Ermeni Soykırımı: Hayatta Kalan Görgü Tanıklarının Anlattıkları. İstanbul: "Belge" Uluslararası Yayıncılık, 2013, 1064 s.

Վերջինե Սվազլյանի ավելի քան 55 տարիների բանավոր պատմության աշխատանքների հանրագումարը եղան 2011 թ. Երևանում ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությամբ լույս



տեսած նրա հայերեն՝ «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» (պատասխանատու իմք.՝ ՀՀ - ԳԱԱ թղթակից անդամ Ս. Հարությունյան), ապա անգլերեն՝ "The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors" և, ի վերջո, գլուխգործոցը (magnum opous)՝ թուրքերեն "Ermeni Soykırımı: Hayatta Kalan Görgü Tanıklarının Anlattıkları" հատորները:

Չարմանալի չէ, որ առաջին անգամ Թուրքիայում նման աշխատության լույսընծայման ղեկարհին և պատվավոր գործը


ստանձնել է նույն երկրում Մարդու իրավունքների պաշտպան, հասարակական-քաղաքական մի շարք ասպարեզներում ղեկավար դեր կատարող "Belge" (ԾՓատարկ) հրատարակչության հիմնադիր տնօրեն Ռազիպ Չարաքուն:

Թուրք առաջավոր մտավորականը նախկինում՝ 2005 թ., ևս - հիշյալ հրատարակչությամբ Ստամբուլում տպագրել էր Վ. Սվազլյանի "Anılarda Ermeni Soykırımı ve Yaşayan Görgü Tanıklarının Türkçe Şarkıları" («Հայոց ցեղասպանությունը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում») և "Ermeni Soykırımı ve Toplumsal Hafıza" («Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի հավաքական հիշողությունը») գրքերը:

Ռ. Չարաքուն թուրքական "Taraf" («Կողմ») թերթին (19 հոկտեմբերի 2013) տված հարցազրույցում, հաղորդելով Վ. Սվազլյանի ստվարածավալ նոր գրքի լույսընծայման մասին, հույս է

հայտնում, որ «հաջորդիվ կյաքարգմանվի և կտպագրվի նույն հեղինակի նաև «Պոլսահայոց բանահյուսությունը» ինքնատիպ հատորը:

Վ. Մվազյանը ևս ցեղասպանությունից փրկված ընտանիքի զավակ է: Նա ծնվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում և նախնական կրթությունն ստացել տեղի հայկական վարժարանում: 1947 թ. ընտանիքով ներգաղթել է Հայաստան: Դեռևս Երևանի Խ. Արքովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում



ուսանելու տարիներին նա սկսել է գրի առնել ժողովրդական բանահյուսության նյութեր և պատմական հուշ-վկայություններ:

1958 թ. Վ. Մվազյանն աշխատանքի է անցել ՀԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ միաժամանակ շարունակելով բանահավաքչական աշխատանքները: 1961 թվականից այդ աշխատանքները համակարգված բնույթ են ստացել ՀԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հովանու ներքո:

1965 թ. Վ. Մվազյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 1995 թ. դոկտորական ատենախոսությունները: 1995–2004 թթ. նա աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ Հայոց

ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

Մկսած 1955 թվականից՝ Եղեռնից վերապրածների հաղորդած վկայությունների գրառման աշխատանքներն եղել են արգասաբեր՝ հակառակ Խորհրդային Միությունում առկա արգելքին: Նա հրատարակել է մի շարք արժեքավոր գրքեր ու գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են արևմտահայոց բանավոր ավանդությանն ու պատմական հիշողությանը («Մուսա լեռ», 1984, «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը», 1994, «Մեծ Եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ», 1995, «Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում», 1997, «Պոլսահայոց բանահյուսությունը», 2000, «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը», 2005 և այլն): Այդ աշխատանքների գագաթնակետն է գրախոսվող սույն աշխատությունը:

2013 թ., երբ ծանոթացա Վ. Մվազյանի հետ, նա ինձ նվիրեց հիշյալ գրքի անգլերեն տարբերակը և հայտնեց, թե հանուն պատմական արդարության տասնամյակների ընթացքում ինչպիսի դժվարություններ է հաղթահարել այդ մեծածավալ գործն իրականացնելու համար, քանի որ ողբերգությունը համառորեն անտեսվել է, և երկար ժամանակ հարցը դիտվել է «կենցաղային» կամ «էթնիկ» հարթության վրա: Սակայն վաստակաշատ գիտնա-

կանի նպատակադրված ջանքերով հնարավոր է դարձել Հայաստանում և Սփյուռքում որոնել ու գտնել իրենց բնօրրանից բռնի տեղահանված ականատես վերապրող հայերի, ձայնագրել և տեսագրել, համակարգել և ուսումնասիրել նրանց պատմածները՝ այն հանձնելով սերունդներին ու մարդկության արդար դատին: Քանի որ մարդկության դեմ կատարված այդ հանցագործությունը վաղ թե ուշ պիտի բացահայտվի, և բոլորը պիտի առերեսվեն ճշմարտության հետ:

2013 թ. դեկտեմբերին Հայաստանի ազգային գրադարանում տեղի է ունեցել սույն թուրքերեն գրքի շնորհանդեսը: Հրատարակիչ



Ռեզիտիվ Ջարաքուրուն հատուկ ժամանել էր Երևան՝ անձամբ շնորհակալություն հայտնելու գրքի հեղինակ

Վ. Սվազլյանին իր երկարամյա տքնաջան, կարևոր ու արժեքավոր աշխատանքի համար: Հրատարակիչը, Ազգային գրադարանի տնօրինությանը նվիրելով հատորի ազդորինակը, նշեց. «Վերժինե Սվազլյանի սույն աշխատությունը մեծ արձագանք կունենա Թուրքիայում: Դա ես կանխագգում եմ, քանի որ ճշմարտությունը վաղ թե ուշ Անկարային ստիպելու է ճանաչել ցեղասպանությունը: Սույն աշխատույթ

յունն իր ծավալով և բովանդակությամբ աննախադեպ է 1976 թ. հիմնադրված «Բեյզե» հրատարակչության գործունեության մեջ: Գիրքը ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև մեր թուրք ժողովրդի պատմությունն է: Ամենաշատ ասելիքն այս գրքի մեջ է: Սրանք պարզ ժողովրդական վկայություններ են, որոնք բացելու են թուրք հասարակության աչքերը: 700 վկայություններն այն մարդկանց, որոնք վերապրել են այդ բոլորը, և, որոնք կարդալով, ընթերցողը կտեսնի իր գյուղը, իր ծնողներին և այլն, որպես փաստարկ կառերեսվի իր անցյալի հետ: Վ. Սվազլյանի նախորդ աշխատությունները մեծ ճանաչում ունեն և արդեն պատվանդան են, իսկ օրերս հրատարակվածը յուրահատուկ հուշարձան կդառնա, որը տեսանելի կլինի նաև աշխարհին» (<http://akunq.net/tr/?p=27365>):

Խնդրո առարկա հատորը բաղկացած է երկու բաժնից:

Գիտական ուսումնասիրության սկզբում հեղինակը ներկայացնում է «Ականատես վերապրողների հաղորդած պատմական վկայությունների ժանրային և տիպաբանական առանձնահատկությունները» (էջ 33–44), ապա հանգամանորեն շարադրում է «Հայոց ցեղասպանության ընթացքը ըստ ականատես վերապրողների պատմական վկայությունների» (էջ 45–103): Վերջում, որպես եզրակացություն, հեղինակը դիմում է Թուրքիայի հանրապե-

տության կառավարությանը. «...Շամանակն է, որ ներկայիս Թուրքիայի Հանրապետության կառավարությունը ևս քաջություն ունենա ոչ միայն ճանաչել ինչպես գրավոր, նույնպես և բանավոր փաստերով հիմնավորված, ապացուցման կարիք չունեցող, պատմական այդ բացահայտ ճշմարտությունը, այլև դատապարտել կատարվածը և հատուցել հայ ժողովրդի բարոյական, նյութական և տարածքային կորուստները՝ պատմական այն իրողության, որը կոչվում է Հայոց ցեղասպանություն» (էջ 101):

Հատորի երկրորդ՝ «Պատմական սկզբնաղբյուրներ» բաժինը (էջ 105–898) գրքի մեծագույն մասն է կազմում: Այստեղ՝ □Պատմական հուշ-վկայություններ□ ենթավերնագրի ներքո (էջ 107–768), Վ. Սվազյանը մասնագիտական հատուկ պատրաստվածությամբ անաղարտորեն և նույնությամբ ներկայացնում է ականատես վերապրողների պատմած վկայությունները: «Պատմական գրույց-վկայություններ» (էջ 769–828) ենթաբաժինը նվիրված է ականատես վերապրողների կրտսեր սերնդի պատմածներին, իսկ «Պատմական երգ-վկայություններ» (էջ 829–898) ենթաբաժնում ամփոփված են հայերեն և թուրքալեզու երգերը:

Սկզբնաղբյուրային այդ նյութերի գերակշիռ մասն անձամբ Վ. Սվազյանն է գրի առել, իսկ մի քանիսը ականատես վերապրողների սեփական հուշերի գրա-

ռումներն են: Հեղինակի գրառած այս զարհուրելի պատմություններն ու երգերն անգնահատելի տեղեկատվություններ են պարունակում Օսմանյան կայսրության պատմության վերջին շրջանի սոցիալական, քաղաքական և տնտեսական կյանքի մասին:

Այդ ստվարածավալ գիրքը միանգամից և ամբողջությամբ ընթերցել համարյա անհնար է: Աշխարհի տարբեր երկրներ (Հունաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Սիրիա, Լիբանան, Իրաք, Եգիպտոս, Բալկանյան երկրներ, Թուրքիա) ցրված ականատես վերապրողների հաղորդած պատմական վկայություններն ու երգերը անզուգական բանավոր աղբյուրներ են, որոնք ուսումնասիրողներին են ներկայացնում Հայոց ցեղասպանության ամբողջ պատմությունը:

Բացի թուրքալեզու երգերից, որոնք ունեն կից թարգմանություններ, հայերեն բնագրերի մեջ ևս առկա են թուրքերեն բառեր ու արտահայտություններ, որոնք հեղինակը ներկայացնում է թարգմանաբար:

Վ. Սվազյանը, տասնյակ տարիների ընթացքում բանավոր սկզբնաղբյուրները հավաքագրելով, Հայոց ցեղասպանության պատմությունն ուսումնասիրողներին և ընդհանրապես պատմաբաններին բացառիկ ու անփոխարինելի ժողովրդական նյութեր է մատուցել:

Գրքի վերջում կարևոր են տարբեր լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, ռուսերեն և հայերեն) «Ամփոփումները» (էջ 899–959), որոնք գաղափար են տալիս հեղինակի կատարած հետազոտական աշխատանքի մասին:

Հիրավի, հսկայածավալ և բժախնդիր աշխատանքի արդյունք է այս եռալեզու աշխատությունը: Իրենց բնույթով ինքնատիպ են գրքի գիտականությունն ապահովող բաժինները: «Փաստագրում ակնատես վերապրողների և նրանց վկայությունների» բաժնում (էջ 961–974) ներկայացվում է ակնատես վերապրողների անունը, ազգանունը, ծննդյան թիվը և վայրը, ինչպես նաև նյութերի գրառման վայրը, տարեթիվը, լեզուն (հայերեն, թուրքերեն, քրդերեն, արաբերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն), գրանցման բնույթը (բնագիր, ձեռագիր, ձայնագրություն, տեսագրություն):

Հատորի մեջ «Ծանոթագրություններից» (էջ 975–982), «Անձնանունների և տեղանունների ցու-

ցիչներից» բացի (էջ 999–1024), որպես նորույթ կիրառվել է նյութերի բովանդակային վերլուծությունը «Թեմատիկ ցուցիչների» տեսքով (էջ 983–998)՝ դյուրացնելու համար հետազոտողների աշխատանքը:

Գրքի վերջում ներկայացվում են «Պատմական երգերի նոտագրությունները» (էջ 885–898) ու ակնատես վերապրողների տարբեր սերունդների լուսանկարները (էջ 1027–1059), ինչպես նաև՝ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության (1915–1923 թթ.) մանրակրկիտ ու զունավոր քարտեզը:

Աշխարհում օրեցօր աճող տարաբնույթ գրականության մեջ ակնատես վերապրողների վկայությունների այս խիստ արժեքավոր աշխատությունը, Թուրքիայում առաջին անգամ թուրքերեն հրատարակվելով, իր անգնահատելի ներդրումը կունենա Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ:

ԲՅՈՒԼԵՆՏ ԲԻԼՄԵՉ
Ստամբուլի Բիլգի համալսար

*Թարգմանվել է՝ «Toplumsal Tarih»
ամսագրից (Ստամբուլ, 2014, ապրիլ, №
244, էջ 92-93)